

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔ

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՅ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՅՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-169 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 2-րդ մասում «ինչպես նաև ապահովագրական ընկերությունների պետական գրանցման առանձնահատկությունները սահմանվում են համապատասխան օրենքներով» բառերը փոխարինել «ապահովագրական ընկերությունների, կորպորատիվ ներդրումային ֆոնդերի, ներդրումային ֆոնդի կառավարիչների, վճարահաշվարկային կազմակերպությունների, ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունների բյուրոյի գրանցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորման, վերահսկողության և լուծարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերով:

Հոդված 2. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի «գ.1» կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից վեց ամիս հետո: